

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԿԱՐԻՍ

Տարեկան . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . 6 "


ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Իրկու թիւ լեկ ծրարով
Տարեկան . . 14 Ֆր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլար
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ

Երանդանի տողը
20 ասանդիս



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Հ Ա Ս Ց Ե

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

НА ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրոշրիւնք ԿԱ
Լեւ տրոշիր

ԲԱՐԻՁԻ ՄԻԹԻՆԿԸ

Հայաստանի ու Մակեդոնիոյ ի նպաստ ֆետր. 15ին Բարձր մէջ տեղի ունեցած մեծ Միթինկին վրայ, ֆրանսական թերթերը, գրեթէ ամբողջութեամբ, ընդարձակ ու մանրամասն յօդուածներ կը նուիրին. Օռօր մասնաւոր խմբագրականի մը մէջ կըսէ. «Հայաստանի ու Մակեդոնիոյ ի նպաստ եղած երէկի միթինկը արդէն յաջողութեան նուիրագործումը ընդունած էր. կարծիր Սուլթանին գործակալներուն անոր դէմ հանելու փորձած խոչնդոտներով: Միթինկը ամէն կերպով յաջողական մը եղաւ արդարութեան ու մարդկութեան դատին համար, ու քիչ հաւաքումներ տեսնուած են այսքան կաշուէն ոչ միայն ներկաներու թիւին ու համակողմնորդ նկարագրին տեսակէտով, այլ նաեւ այսքան բարձր կարեւորութիւն մը ներկայացնող խնդրոյ մը նկատմամբ բնութեւնէ փաստորու արժէքին, բարձրորէն մտացի հանրութեան մը ու ատենախօսներու կամքի միաձայնութեան տեսակէտով: Արդէն անկարելորդ տեսարան մը չէ տեսնել թէ Բարձր մէջ զաղափարով իրարմէ այնքան հեռի անհատներ, ինչպէս Բաշանսէ, Ժօնէս ու Լըոռլ, Տընի Գօշէն, Լըոռա Պօլիէս, ամէնքն ալ կուգային արդարութեան նոյն դատը պաշտպանելու:

Մ. Տընի Գօշէն կըցաւ ներկաներու միաձայն ծափահարութեանց արժանանալ, պիւճախօս կերպով մը պահանջի հանրային կարծիքին գործակցութիւնը, կոտորածէ ազատելու համար Թուրքիոյ քրիստոնեաները, որոնց ձարդկային կեանքի ու իրաւունքի ամենէն տարրական երաշխաւորութիւններն իսկ կը զլացուին կանոնաւորաբար ընտանակի մը կողմէ, որուն գոյութիւնը Եւրոպայի համար ամօթ մըն է:

Ժօնէս յիշեցուց սքանչելի բարբառով մը թէ խնդիրը պարզապէս արդարութեան գործ մը ընել էր, այս ժողովուրդներու ի նպաստ ձեռք ձգելով տարրական երաշխաւորութիւններ, զոր հանդիսաւոր զաշնադիրներ անոնց խոստացան, ու բնաւ երբէք իսլամութեան զէմ պատերազմ հրատարակել կամ Թուրքիան անդամատել: Այս բանն ալ առժամայէն Սուլթանէն կախում ունի, ինչպէս որ անոր կայսրութեան անցեալ բաժանմունքները որոնք կատարուեցան միմիայն ու եւ է բարեկարգիչ գաղափարի զէմ անոր անասնական զիմադրութեան պատճառաւ:

Բոնէսանսէ, պայծառութեան, ճշ-

գրողութեան, փաստերու ճոխութեան, քաղաքական ներհունութեան ու միանգամայն գործնական իմաստութեան տեսակէտով հրաշալի ճառի մը մէջ, Արեւելեան խնդրոյ պատմութիւնը ըրաւ ու ցոյց տուաւ այն շատ պարզ ու շատ գործնական լուծմունքները, զոր հարկ էր պահանջել ու որոնք դիւանագիտութիւնը զիւրութեամբ կրնար իրականացնել: Ժողովը ունկնդրեց Լիոնի երեսփոխանը շահագրգռութեամբ մը որ պատիւ կը բերէ նոյնքան անոր քաղաքային հմտութեանը որքան աւտենախօսի տաղանդին:

Ստորեւ կը ներկայացնենք միթինկին մէջ խօսուած ճառերու մէկ ամփոփումը, նոյնպէս Օռօէ արտատրուած: «Ինչ հիմնադրանք քան զէպի վեհագի հրայրք մը խուժանի մը թախչքը, երբէք կարելի չէր զայս աւելի լաւ հաստատել ու հասկնալ քան երէկ, հայերու եւ մակեդոնացիներու ի նպաստ կազմակերպուած ցոյցին մէջ. Թուրքատէրոյ սրահը դեռ շատ պզտիկ էր իր մէջը առնելու համար հազարաւոր մարդերն ու կրիներն որոնք փափաք ունէին գործուած Վայրագութեանց համար զգուանքի իրենց աղաղակը բարձրացնել, ու արտայայտել իրենց ատեւութիւնը կեղծքիչին համար, իրենց համակրանքը տառապելիներու համար: 4,000-է աւելի անձեր հնար գտան Եւրօ ծօ թատրոնին սրահին մէջ զիւրեւելու, ու 2,000-է աւելի մարդիկ հարկադրուեցան սրահը մտնելէ ետ կենալու:

Մնաց որ, ու կուգեմ զայս անմիջապէս ըսել, ոստիկանութիւնը, — գիտակցաբար կամ ոչ—անհաւատալի անճարակութիւն մը ցոյց տուաւ. ոստիկանները տարօրինակէս բիրտ եղանակով անոր համար էր որ «հոգ ազատութեան վրայ պիտի խօսէին»: Վերջապէս, չի պնդենք. Հանրութիւնը մեծապէս հանդարտ եղաւ. նոյնիսկ չը բողբոքեց ալ, մէկ բանի մը վրայ միայն մտածելով. ջանալ սրահին մէջ մտնել, ծափահարելու համար ատենախօսները ու Հայաստանի եւ Մակեդոնիոյ եղբայրներուն մասին իր զգացումները, մեծագոյն լսելի ընելու համար:

Գումարումը 2 ու կէս ժամ վերջը տեղի ունեցաւ, մինչ սրահին մէջ այդ միջոցին կը խօսակցէին, կամ Գիլառի Բո Սուլթանի լրագրիւրը կը կարդային, կամ ատեն ատեն, անկիւնի մը մէջ կնքեւորուէին: Գերդէին. ոչ ոք կը խորհէր ու եւ տըրտունջ ընել. ամէն մայր հոգ եկած էր մեծ ու աղիւլ դատի մը սիրոյն համար միմիայն մտածմունքով. ու արդարեւ միթինկը յաջողած էր, նոյնքան սրահին որքան կազմակերպիչ

մասնախումբին մէջ, որը միաձայնութեամբ ծափահարուեցաւ, երբ վերջապէս իր տեղը գրաւելու եկաւ թատերաբեմին վրայ, բազմաթիւ քաղաքագէտներու ու ամեն կարգի մարդոց մէջ:



Տէթուրնէլ ՏԸ ԳՕՆՍՍԱՆ (Անդամ Հանկէյի իրաւաւոր ասեանին)

Նախագահին ճառը: Նախագահը Մ. Տէթուրնէլ, աւելի վայելուչ քան փայլուն ատենախօս, նախ կը հարցնէ թէ ինչպէս կրնայ բացատրուիլ Թուրքիոյ Սուլթանին գոյութեան զգուանքը, վատեցուցիչ անպատեթութիւնը, անպատեթութիւն որ Սուլթանը չարաչար կը գործածէ, ոտքին տակը առած գոյութիւն ունեցող զաշնադիրներ ու ստորագրող յանձնառութիւնները:

Իրաւ որ պիտի կարծուէր թէ Ապտիւլ Համիտ ունի զարաւոր ու հնաւրդէտ միջոցներ ու գիտէ ծախու առնել կարգ մը լուծմունքներ, որպէս զի զահիճին սանձաւորուած բարկութիւնները զոհեցու զէմ դարձնէ:

Բայց բոլոր գանձերը պիտի չը յաջողին խղիւղ տիեզերական խղճմանքը:

Ինչ որ իրերու այս վիճակին տեսական հանգամանք մը տալու կը ծառայէ, այդ ալ Արեւելեան խնդիրը ըստածին կնճռոտութիւնն է. բայց այս խնդիրը անլուծելի է միթէ. Մ. Տէթուրնէլ ոչ կըսէ. ու ինչ ձեւով ալ որ զայն նկատենք, հակառակ պետութեանց հակառակութեանցը, անկարելի է ընդունել որ, 20րդ դարուն Եւրոպայի մէկ մասին մէջ կարենայ գոյութիւն ունենալ քաղաքակրթութեան ու բարբարոսութեան այս հրէշային յարակցութիւնը:

2½ տարիէ ի վեր մենք զէպի ետեւ ճամբայ ըրինք. երբ Յունաստան անկախութեան գրօք բարձրացուց, բովանդակ Եւրոպա միաբան գտնուեցաւ: Ամէն կողմերէ հարստահարեալներու զէմ զէնքեր կը մատակարարենք, դա-

հիճները. Եւրոպայէն կառնեն իրենց գինուորական մարդիկները, ու մենք բարբարոսներուն մեղսակիցները կըլանք. կա՞յ ուրեմն ժողովուրդներու համար զատ բարոյական մը, ու կառավարութեանց համար ալ զատ, կը հարցնէ Մ. Տէթուրնէլ. կը մերժենք այսպիսի բան մը ընդունել, ու կը մերժենք աւելի երկար ատեն ընթանալ թերացումէ թերացում:

Ատենախօսը կը յիշատակէ բառ մը, զոր օր մը իրեն ըսաւ Մեծ Կլասթիօնը, անոր տալով Հայաստանի վրայ իր գրած գիրքը. «Զբաղէ Հայաստանով, վասն զի Հայաստանը պաշտպանելը Եւրոպայի ծառայութիւն մատուցանել է»:

Ու Ֆրանսան, նուազ քան ու եւ է ուրիշ ազգ, չէ կարող լսելու համար կերպիլ. այս պատճառաւ Մ. Տէթուրնէլ հպարտութիւն կըզգայ նախագահելով այսքան մեծարելի ցոյցի մը, որ Ֆրանսական ու մարդկային է, ի նպաստ բոլոր հարստահարեալներուն ըլլան քրիստոնեայ, միւսուլման կամ հրեայ. ու այնքան ալաղան տարբերու այս միաբանութիւնն է որ հաւաքումին զեղեցկութիւնը կը կազմէ:

Ստարները հաշուի կը դնեն մեր երկպառակութիւնները ու ատենախօսը այդ երկպառակութեանց համար ցաւ չի յայտնէ. վասն զի անոնք կարգ մը տեսակէտներով բեղմնաւոր են: Բայց այսօր անոնք կանհետանան, ապացուցանելով թէ բոլոր ցանցնուած ուժերը կարող են ժամանակ մը հաւաքուիլ, որպէս զի բարբարոսութեան զէմ զոհերը պաշտպանելու մէջ Ֆրանսայի կատարած յաւիտեական պաշտօնին հոյակապ տեսարանը ցոյց տան:

Ժողովէն ջիւղօրէն ծափահարուած Մ. Տէթուրնէլ խօսքը Մ. Տընի Գօշէնի կուտայ:



ՏԸՆԻ ԳՕՇԷՆ (Երեսփոխան)

Տընի Գօշէնի ճառը: Սուլթանը իրաւունք հրաշք մը գործեց, կըսէ Մէնի երեսփոխանը. մեր այսքան խառնակ ժամանակին մէջ, անիկա բոլոր Ֆրան-

սացիները հաւաքեց խնդրոյ մը շուրջը, որը իրաւ արդարութեան ու մարդկութեան խնդիր մըն է:

Ու Մ. Տընի Գօշէն, որ պատշաճութեան ու չափաւորութեան մէջ անթերի եղաւ, Հայաստանի դէպքերուն մէջ յօդիչ նկարագրութիւնը կը ներկայացնէ. «Երբ մարդ պատմութեան մէջ կը նայի, սարսափահար կը մնայ հանդէպ նախնի մարդկութեանց ոճերներուն: Թիմուրլէնկի մը, ձէնկիզ խանի մը ըրածները մեզի գարշելի կը թուին. բայց անոնք այնքան հեռի են որ անոնց ճշմարտութեանը հաւատալու կը վարանին»:

Անոնք կը թուին ըլլալ առասպելներ, վախ ազդելու համար հնարուած: Այսօր ինչ կը տեսնենք. մենք կը գտնուինք այնպիսի քաղքի մը մէջ ուր արդի մտքին բոլոր յաղթանակները ի տես կը դրուին. թոմարայները զայն կ'ալօսեն, շխատանոցներ անոր մէջ կ'աղը կը բաշխեն, ելեքտրականութիւնը...

Վերջապէս ժամանակակից ոստան մը, կատարեալ յառաջդիմութեան մէջ: Յանկարծ փողոցներու մէջ հրոսակներ կը սփռուին. զոները, խանութներու փեղկերը կը կոտորեն, տուներու մէջ կը խուժեն ու կըսպանեն, կը խողխողեն, կը թալկեն: Մտածելը սարսափելի չէ. ու այս տեսարանը, որ սարսափի կողմէ բոլոր ոչ քաղաքակիրթ ազգերու մեզի թողածն ալ կը գերազանցէ. Թուրքիան 1895էն ի վեր կը ներկայացնէ»:

Մ. Տընի Գօշէն ցոյց կուտայ թէ Հայերը ինչպէս, աշխատասէր, յոգնող մարդիկ, անդադար քիւրտերու կողմէ կը կողոպտուին. այդ աւազակները Սուլթանը ոստիկան ըրաւ. այսպէս երեւան կուգան Սասունի դէպքերը, որ ատեն երեք բարգաւաճ քաղաքներէ ոչինչ կը մնայ: Բայց կառավարութեան անտարբերութիւնն ալ յառաջ կը բերէ — ու իրաւամբ — յեղափոխականներ:

Գիշ ատենէն Հայաստան կատարեալ անստամբութեան մէջ կը գտնուի ու կը մոռնենք 96ի, 97ի զարհուրելի շրջանին մէջ, կաղձակիւններու կոտորածներու թուականին մէջ:

Արդ ամէնքը, մինչեւ Ուրֆայի գարշելի կոտորածը, Կարմիր Սուլթանի հրամանով կը գործուի:

Այս դէպքերը, որոնք 19րդ դարու ճիշդ մէջ տեղը տեղի կ'ունենան, այնքան անհաւատալի կը թուին որ, նոյնինքն ատենախօսը անոնց հատուց միմիայն ակահատես վկաներ տեսնելէ ետք. անոնցմէ մէկը, եւրոպացի ճարտարագէտ մը որ ժամանած էր աւերուելու վրայ եղող քաղաք մը, գունդերու շղթայէն արգելքի կը հանդակ:

Հրամանատարին երթալով, անցնելու հրաման կը խնդրէ.

— Կիցէք, կը պատասխանէ հրամանատարը, ընդունած հրամաններու համաձայն, տակաւին երկու ժամ թող տալու եւ որ ջարդը տեղի ունենայ:

Այս բառը ժողովին մէջ ընդհանուր աղաղակ մը լսուած կը բերէ. ու երբ Տընի Գօշէն կ'աւելցնէ թէ հրամանները կը բղխեն միակեանէն, Կարմիր Սուլթանէն, սրահը կ'աղաղակէ.

— Մարդասպան, Մարդասպան:

Այս դէպքերուն հանդէպ, եւրոպան ինչ պիտի ընէ, կը հարցնէ նաեւ Մ. Տընի Գօշէն. Ռուսիան կաշկանդուած է անդադար զրօնած յանձնառութիւններով: Պէտք է որ եւրոպան գործէ, բայց արագ գործէ. ու այս բանին համար, հանրային կարծիքը, այս օրուանին նման սքանչելի հաւաքումներու մէջ իր կարծիքը յայտնելով, ազդեցութիւն ընդունելու է քաղաքագէտներու ու կառավարութեան վրայ, որոնք չ'ապագանց հակամէտ են թողլու որ գործերը ինքնին ընթանան:

Մ. Տընի Գօշէնի ճառը, մէկէ աւելի անգամներ ներկայներուն ծափահարութեանցը արժանացաւ:

(ՕՌՕՐ)

(Մնացեալը յաջորդով)

ԽԱՐԵՈՒԹԻՒՆ

Գանի մը օր առաջ Խաւառնի մէջ Վառնայի Թաղ. Խորհրդոյ կողմէ հանգանակութեան ցանկ մը հրատարակուեցաւ. ի զուր սպասեցի ուրիշներու:

Կողմէ այդ խորհրդ մասնամասնութիւնը: Ուստի ես իբր ժօտէն տեղեակ այդ խորհրդ, իրիզս հանգարտեցնելու համար այսօր պէտք կ'ըզամ պարզել գիտցածս:

Գանի մը առիտ առաջ թաղ. խորհուրդը Ղարիպեան Տ. Սարգիս քահանան Ռուսիա զրկած էր հանգանակութեան համար: Քահանան հանգանակութիւնը վերջացնելով հոս վերադարձաւ: Ահա այդ ցուցակէն էր որ թաղ. խորհուրդը հրատարակութեան տուաւ. բայց մեր թաղ. խորհուրդը լաւ փախուստի միջոց մը գտած էր. իր պաշտօնական նամակին մէջ ակնարկ մը իսկ չկար թէ ժապաւինեալ տետրակին ինչ նպատակաւ արտօնուած եւ վաւերացուած է Վեհ. Կաթողիկոսէն:

Բայց բուն իրողութիւնը ահա ես պարզեմ:

Թաղ. Խորհուրդը երկու նամակներ կը խմբագրէ, մին պատրիարքին որպէս զի սա բարեխօսէ Վեհ. Կաթողիկոսին եւ միւսն Վեհ. Կաթողիկոսին, խնդրելով որ ժապաւինեալ տետրակ մը յանձնէ Տ. Սարգիսին հանգանակութիւն ընելու ի նպատակ Վառնայի յորանցիկին: Տ. Սարգիս ասկէց կը մեկնի ուղղակի էջմիածին. թաղ. Խորհրդոյ վկայագրով կը ներկայանայ Վեհ. Կաթողիկոսին, պէտք եղած վկայութիւնն եւ բացատրութիւնը տալով Վառնայի խորհրդի անձուկ եւ հանգանակութեան կարօտ վիճակինը: Դժուար է մասին:

Վեհ. Հայրիկը առանց մտքէն իսկ անցնելու որ թաղ. խորհուրդը թէ՛ զինքը եւ թէ՛ Պատրիարքը խաբած է, հանդէպ թշուառ իրողութեանը անգամ մը եւս ապացոյցանելով, իսկոյն կը յանձնէ Տ. Սարգիս քահանային ժապաւինալ տետրակ մը, վաւերացեալ սպաս. հանգանակութեան ի նպատակ Վառնայի յորանցիկին: Տ. Սարգիս այդ տետրակն առնելով, հանգանակութեան կակսի: Ինչու՞ ումանք կը դատապարտեն ժողովուրդի այն դատակարար որուն համար զգուշիկ եւ ատելի դառցած են այդ սեւասքեմ կղերները: (անշուշտ բացառութիւնը յարգելով): Ահա Տէր Սարգիս քահանան ինչ ինչ էնթրիքներեցէ՛ք այդ մասին... այս տունին մէջ երկուստեք մը կայ... միմիջեց ծերունին կեցկոտուր բացատրութեամբ մը:

Ներով գործիք կըլլայ երկու գաղթականներու եւ կը խաբէ իր հոգեւոր մեծ հայրը եւ կը յանդգնի սուտ խօսիլ եւ սուտ վկայել թէ Վառնան որքանոց ունի??: Ո՛վ քարքեր, ահա ձեզի կղերներու մէկ նմոյշն ալ:

Վառնան որքանոց հունի. արդէն չը կրնար ունենալ ասկէց վերջ ալ, որպէս զի այդ որքանոցի հոգաբարձուն կամ խնամակալն ըլլայ թաղ. խորհուրդը: Արդ, պաշտօնական այս խաբեւայութեան ինչ տնուէն պիտի տանք եւ ինչ անունով պիտի որակենք այդ ապիկար արարածները:

Կրօնական բարձրագոյն իշխանութեան արտօնուած եւ վաւերացեալ ժապաւինեալ տետրակին մէջ նշանակուած տետրակները պէտք է ձիշղ ըլլան, ուստի քանի որ տետրակին մէջ եղած գումարն 4000 ռուպլին կանցնի, ինչպէս եւ ինչու՞ թաղ. խորհուրդը 1888 թուալի եւ 50 կոպէկ հրատարակութեան կուտայ եւ թէ այդ գրամէն 261 ռուպլի 46 կոպէկն Տ. Սարգիսին կը յատկացնէ, իբր ճանապարհածախս եւայլն. ասիկայ բացարձակապէս գիշծում մըն է (*):

Գալով թաղ. խորհրդոյ, արդեօք այնչափ անկարող էր ըմբռնելու թէ, օրին մէկը իր խաղաղարարները երեւան պիտի ելնէ. եւ զեռ աւելին կայ:

Թաղ. խորհուրդը Ռուսիոյ մէջ որբերու նուիրական անունը չ'անգործելով գրամ կը հաւաքէ, իսկ աստիճանական մէջ անվայել ընթացքով ամէն ճիգ կը թափէ որքանաւոր թաւերական ներկայացման խոչնդող ըլլալու եւ մինչեւ իսկ անամօթաբար պաշտօնապէս կառավարութեան կը զիմէ ներկայացուին արգիւիւ տալու:

Դիւս. Խւրք.

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՎԱՋԳԻՆ

— Ինչ երիտասարդ... բացաղանչեց ծերունին ինքնիմէ՛ կըստ ձայնով մը:

— Մի՛ ծածկէք... պէտք է որ անկեղծ ըլլաք ձեր խոստումներու մէջ: Ես դիտեմ թէ այս տունին մէջ երիտասարդ մը կայ:

— Ամենեւին... այս տունին մէջ ինչ գատ մէկը չը կայ, Տիկին: Ու որ ատանկ չինծու յայտնուելուն մը ըրած է ձեզի, չատ սխալած է:

Կինը լռեց: Հոգեւոր հատանքը դառնացուց իր դէմքը: Օ՛հ, չկրցաւ իր արցունքները զսպել, որոնք սկսան վար թափուել այտերէն:

Ծերունին ակամայ շարժում մը ըրաւ ու դողդոջաց...

— Փուճ տեղ կը ջանաք ծածկել ինչ... հեծկտաց կինը մորմոքալի ձայնով մը, դիտեց որ չեմ խաբուած:

Կը խնդրեմ տիկին, ուսկի՞ց իմացաք... ո՞վ ըսաւ ձեզի թէ այս տունին մէջ երիտասարդ մը ապաստանած է:

— Երբ կը պնդէք թէ այս տունին մէջ երիտասարդ մը չ'գտնուիր, առարկեց կինը ցաւաւորաբար ձայնով մը, ալ ինչ հարկ կայ ատանկ հարցում մը ընելու: Ուրեմն մտաք-բարով:

Ու մեքենարար ոտքի ելնելով, դէպի դուռը հաւաքացաւ:

Ծերունին ճիգ մը ըրաւ ու ըսաւ.

— Կեցէ՛ք, տիկին... մի՛ աճապարէք:

Կինը դողդոջալով ետին դարձաւ ու ծերունին նայեցաւ:

— Ըսէ՛ք ինձի, տիկին, միմիջեց ծերունին, ձեր փնտռած երիտասարդին հետ ինչ կայ ունիք:

— Ե՛ս, հարցուց կինը:

— Այո՛, դուք, պատասխանեց ծերունին:

— Ո՛հ, այդ գաղտնիքը պիտի պարզէի ձեզ երբ, դուք համոզուելէ թէ թշուառ կին մըն եմ ես ու աշխարհքի վրայ միայն գիւրդման մը ունիմ: Կը պաղատեմ, ջոջ աղա՛, մի՛ նայիք աչքերուս մէջ... Աստուծոյ սիրտն ըլլա՛յ, մի՛ կասկածիք ինչ... Եթէ կը խաբէք զե՛ս, եթէ կը ծածկէք ճշմարտութիւնը, պետեցէ որ կնոջ սիրտ մը կայ ձեզ ոտքերուս տակ. գիտեցէ որ թշուառ արարած մը կը գտնուի ձեր դէմը...

Ծերունին ոտքի ելաւ ու դողդոջալով դուռնի մօտ կեցած կնոջ մօտեցաւ եւ անոր ձեռքը ընկնելով մըրմընջեց:

— Նայեցէք տիկին: Վերն Աստուած կայ, եթէ յայտնածներս իմացուին, ձեր դուռը կը բացուի:

— Այո՛, թող Աստուած վկայ ըլլայ, կրկնեց կինը խղզուած շեշտով մը:

— Մտիկ ըրէ՛ք. քիչ մը առաջ չուզեցի յայտնել...

— Երբ կը պնդէք թէ այս տունին մէջ երիտասարդ մը կայ... միմիջեց ծերունին կեցկոտուր բացատրութեամբ մը:

— Պարկաստանէ՛ն եկած է, հարցուց կինը:

— Այո՛, պատասխանեց ծերունին:

— Երկու առիտ առաջ ըսէ՛ս:

— Ծիշդ է:

— Արդեօք կարելի է տեսնել զինքը:

— Բայց զինքը տեսնելէ առաջ՝ պէ՛տք է որ ամեն բան խոստովանիք եւ ըսէք ինձի թէ ինչ կայ ունիք անոր հետ:

— Նախ՝ անիկա Պարկաստանցի չէ:

— Հապա՛:

— Մեր քաղաքէն է:

— Անկարելի է... ուսկի՞ց գիտէք:

— Գիտեմ... եւ կը ճանչնամ իր մայրը...

— Կը ճանչնա՞ք իր մայրը:

— Այո՛:

— Ո՞վ է:

— Ե՛ս եմ... Կ'ս...:

— Ինչպէ՞ս... դուք անոր մայրն էք:

— Հաւատացէ՛ք, ջոջ աղա՛... հաւատացէ՛ք որ անիկա իմ կուրտուած զաւակս է, զոր կը գտնեմ քանիեւ թը տարի ետք:

— Ինչ ապացոյց ունիք, տիկին:

— Անոր աջ թիւքն վրայ Ս. Երուսաղէմի նշանը կայ, որուն թուականը կը համապատասխանէ իմ թիւիս թուականին:

— Բայց դուք այդ տեղեկութիւններն ուսկի՞ց առիք:

— Մի՛ հարցունէք... ամեն բան պիտի պարզուի:

համար. բայց վսեմ. նահանգապետը կարծես ներկայացումն եւ ինքն անձամբ ներկայ կը գտնուի:

Ահա մեր վառանայի թաղ. խորհուրդը եւ քահանան. ասոնց իսկական մակդիրն որոշել ընթերցողաց կը թողուի:

Հանդանակուած գումարն այժմ կը մնայ թաղ. խորհրդոյ քով. մենք հրապարակաւ կը յայտարարենք իրենց թէ, պէտք է այդ գումարն ամբողջովին իր նպատակին ծառայէ. կ'ս'մ որ եւ իցէ որքանոցի մը, եւ կ'ս'մ պատրիարքարանի նպատակից Յանձնաժողովոյն ղրկուի: Թաղ. խորհուրդն եթէ մեր տոյն առաջարկն փութով չը գործադրէ եւ հրապարակաւ չը յայտարարէ, մենք պէտք եղածն պիտի տեղեկացնենք որոնց որ անկ է: (*)

ՏԱՐԱԳԻՐ ՀԱՅ ՄԷ

Վառնա, 8 փետրուար

(*) Հանդանակուած գումար իր բուն նպատակին գործածելու պահանջը անվիճելիօրէն օրինաւոր է. ինչ որ խոզանման թաղական գործը չըբռնեն: Իսկ գործուած այս պաշտօնական խաբէութիւնը Պատրիարքարանի եւ կաթողիկոսարանի տեղեկագրելու վառնայի թաղականութեան դիրքը վարկաբեկելէ: Մենք «Վառնայի թաղականութիւն» ըսելով պէտք չէ հասկընանք այժմ զայն վարդ երկու խոզանման արարածները՝ որոնց պաշտօնին չըջանը քանի մը շաբաթէն կը լրանայ. այլ այն պաշտօնական դիրքը որ ամբողջ Վառնայի հայութիւնը կը ներկայացնէ եւ որ կրնայ ի մօտոյ արժանաւոր ձեռքբերու յանձնուիլ: Ուստի պէտք է զգուշանալ ապագայ թաղականներու բարոյական վարկին եւս արատ բերելու եւ անոնց ապագայ գործունէութիւնը դժուարութեան բաղխելու հանգամանք ունեցող այս խաբէութիւնը մեր բարձրագոյն իշխանութեանց արշնչներուն մէջ նշանակել աւել:

Դիս. Խմբ.

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Մարտ 16ին Պոլսոյ Եւտի Գու. Էթի Ազգային Հիւանդանոցին ի նպատակ մեծ նուագահանդէս մը տեղի պիտի ունենայ, ինչպէս ուրիշ տարիներ. 1,200 օրինակ տոմարակ պիտի տպուին, իւրաքանչիւրը մէկ ոսկինոց:

— Ինչպէս ծանուցինք, Երուսաղէմի մեր վառնայի Լուսարարապետ՝ Տ. Ս. Եպիսկոպոս Խապանանի կիկիկոյ կաթողիկոս րնտ. բուեւովը նոյն պաշտօնը թափուր մնացած ըլլալով, վառնայի Միաբանական Ժողովը Պաշտօնատի Տեղապահ Տ. Գ. Սրբիէլ Վրդ. Անոյշեանը Լուսարարապետ րնտրած էր. խնդրին տարօրինակ կողմը այն է որ, իբր պատասխան Երուսաղէմի Պատրիարքին մէկ պաշտօնագրին՝ որով Անոյշեան վարդապետի րնտ. բուեւինը հաղորդելով զայն Երուսաղէմ կը հրաւիրէ Լուսարարապետի իր պաշտօնին ընդհուպ ձեռնարկելու համար, Պաշտօնատի Ե. Գ. Սրբիէլ Վրդ. Սրբիէլը կը յայտարարեն թէ, իրենց իրենց Տեղապահին պաշտօնավարութենէն չափ սգանց գոհ մնացած ըլլալով, մինչեւ որ անոր համարժէք եկեղեցական մը չգրուեն իրենց, պիտի չհանդուրժեն որ Անոյշեան վարդապետը իրենց մէջ խնայէ. այնպէս որ շնորհանով վարդապետը այժմ ճշմարիտ աւքիւտորի ներքեւ առնուած է:

— Կիկիկոյ նորընտիր կաթողիկոս Տ. Սահակ Եպ. Խապանան որոշում տուած է Մեծ-Պահքի Երկրորդ շաբթուն Երուսաղէմէն մեկնելու իր փափագը ըլլալ կը թուի կաթողիկոսական օծումը Մեղիկազարդի օրը կատարել:

— Մարաշի մէջ ողբացեալ հայ

բարերար Ի. Ժամհարեանցի ի իշատակ, փայլուն հանդէս մը տեղի ունեցած է. Սոքրմանդակ այս առթիւ կը գրէ. «Ինչպէս կը յիշուի, հանգուցեալ Ի. Ժամհարեանցի բարերարութեամբ ու նպատակով կը պահպանուի Մարաշի որբանոցը, որուն մէջ 100է աւելի անոք տըղաքներ ուսում ու կրթութիւն կառնեն ու կը պատասխարուին: Հանգուցեալը, հաշուագէտ ու տընտեսագէտ մարդ, իր դրամական գործերուն նման կը հոգար նաեւ այդ հաստատութիւնն ալ, ժամանակին զրկելով յատկացեալ նպատակը, նուիրելով մինչեւ իսկ այդ տղոց մրգեղէնը: Այս հոգածութիւնը այնքան խորին տպաւորութիւն ըրած է այդ հաստատութեան մէջ խնամք ու հոգածութիւն վայելողներու և ժողովրդեան վայ, որ Ս. Ծննդեան մեռելոցի օրը հոգեհանգստեան պաշտօն կատարուելէ Մարաշի եկեղեցւոյն մէջ Քաղաքին հայոց գրեթէ ամբողջութիւնը ներկայ գտնուելու են, Ս. Սարգիս եկեղեցւոյն մէջ, ուր բոլոր սաները թեւերին սեւ ժապաւեններ կապուած. կանգնելու են դասին մէջ. պատարագի միջոցին ժողովուրդը խորին մտածութիւն թեւած ու տխրութեամբ ունկնդիր եղեր է. հոգեհանգստեան միջոցին Առաջնորդ. Տեղապահը դաւբանական մը խօսելով, բացատրել է թէ շատ զգալի է կորուստը անոնց համար որոնք ուղղակի հանգուցեալին բարերարութիւնը տեսած ու վայելած են: Ուստի խորապէս զգածուած, նոյն միջոցին արտասուել են»:

— Սիւրիսարէէն գաւառական արհեստանոցներու ինպատակ Պատրիարքարանին 210 ֆր. զրկուած է:

— Բիզանդիոն կը գրէ թէ Երուսաղէմի նորընտիր Լուսարարապետ՝ Անոյշեան Գ. վարդապետի ընտրութեան համարիտ չըլլալուն համար, Տ. Գ. եպիսկ. Երէցեան, Երուսաղէմի պատրիարքին Պոլսոյ փոխանորդը, իբր թէ որոշել է իր պաշտօնէն հրաժարիլ, ու կ'ս'մ իզմիրի առաջնորդութիւնը ընդունիլ, կ'ս'մ Ռուսմանիոյ ու Պուլկարիոյ մէջ Այցելու Հովիւի պաշտօնը:

— Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանի Ա. Գործակատար Տիգրան Տէր Ներսէսեան իր կամքովը Պատրիարքին իր հրաժարականը ներկայացուցած է, պնդելով որ այդ հրաժարականը վերջնական հանարուի: Նմանապէս Հանգստեան կոչուած է Պատրիարքարանի Բ. Գործակատար՝ Թարութիւն Կասպարեան:

— Բնիկ Տրապիզոնցի ու Պէրութի մէջ վախճանած՝ Թովակիմ Թովաքաթեան անունով հայ մը Ազգ. Հիւանդանոցին 400 ոսկի կտակած էր. այդ գումարը արդէն յանձնուած է Հիւանդանոցի հոգաբարձութեան:

— Ամերիկայի Առաջնորդ՝ Սարահեան Տ. Թովսէփ եպիսկ. իբր Ուստրի եկեղեցիին կալուած՝ 3600 տոլարով երկու տուններ գնած է, Ն. Սրբազնութիւնը մտադրութիւն ունի Նիւ-Եօրքի մէջ ալ եկեղեցի մը կանգնելու ու անկարելի ալ չէ բոլորովին այդ եկեղեցիին շինութիւնը՝ քանի որ արդէն Տ. Թովսէփեան ու կիւլպենկեան եղբայր խոստացած են 10,000 տոլար տալ. իսկ 10,000 Տոլարի չափ խոստում մըն ալ նուազ ունեւոր վաճառականներ ըրած են:

Այս կտրուկ տեսարկութիւնէն ետքը ծերունին ուրիշ հարցում մը չըրաւ, այլ յայտնեց թէ՝ երիտասարդը տեղ մը գացած էր եւ պիտի վերադառնար կէս դիշերէն ժամ մը առաջ:

— Ուրեմն, պիտի սպասեմ... մըմնջեց կինը խելալի ձայնով մը:

— Դուք գիտէք, նկատել տուաւ ծերունին:

Կինը խոնջած ու դալկացած եղանակով մը բազմոցին վրայ ինկաւ ու սպասեց:

Ժամերը կը սառնէին:

Դուքը՝ հողմախառն անձրեւ մը պատուհանին կը զարնուէր խալալով ու որոտումը կը լսուէր շարունակաբար:

Ծերունին պահ մը հիւրանոցէն դուրս ելաւ եւ մինակ թողուց կինը:

— Աստուած իմ, մըմնջեց կինն ինքնիրեն. եթէ իմանայ որ դաւաճան մարդու մը զաւակն է... եթէ ամեն րան հասկնայ... արդեօք ինչ պիտի ընէ... Ո՛հ, ես ինչպէս անոր երեսը պիտի նայիմ...:

Կինը չլսեց դուռնի բացուիլը, հետեւաբար չնշմարեց թէ իր դէմը կը դանուէին երկու մարդիկ, որոնք խորին տխրութեամբ մը զինքը կը գիտէին:

Վերջապէս ծերունին մօտեցաւ. կնոջ ու մըմնջեց.

— Տիկին...:

— Կինը գէպի ծերունին նայեցաւ. Ու ամբողջ մարմնովը սարսաղ...:

— Խօսի՛ր կուզէիք ինձի հետ, հարցուց Վազգէն, որուն ըստ մը յայտնած չէր ծերունին:

— Այո... թոթովեց կինը:

— Խիստ լաւ... ինչ ըսել կը փափաքէք, յա-

րեց Վազգէն կատարեալ պաղարկանութեամբ մը:

— Ո՛հ, ըսելիքս կը խղզէ զիս... հառաչեց կինը՝ ջանալով իր հոգւոյն ամբողջ դանուրութիւնը դստել:

— Տխուր ըսելիք մը ունի՞ք, ընդմիջեց Վազգէն՝ զարմանքով մը ծերունիին երեսը նայելէ ետքը:

— Կուզէի գիտնալ թէ ծնողքդ ո՞րք են, մըմնջեց կինը ձիգ մը ընկելով ինքն իր վրայ:

— Զիմ գիտեմ... ես ծնողքս տեսած չեմ, գողդաղ Վազգէն՝ այս անգամ սո՞ղունելով:

— Բնաւ չէ՞ք յիշեր...:

— Կը յիշեմ... երազի մը պէս կը յիշեմ:

— Ծնողքովայրդ ալ չէ՞ք յիշեր:

— Ո՛հ:

— Երբ փոքր էիք, Ս. Երուսաղէմ գացած էք:

— Այո՛:

— Յետո՞յ...:

— Վերադարձած ատենս, Պարսկիներու ձեռքն ինկած ըլլալով, կորսնցուցած եմ ծնողքս:

— Մի՞թէ անոնց կարօտը չէք քաշեր:

— Ի՞նչպէս չէ... բա՛յց...:

— Մի՞թէ չէք յուսար որ օր մը կրնաք գտնել ծնողքդ:

— Ե՛ս:

— Այո՛:

— Անկարելի է այդ... այսօր քսանութիւն տարիներ անցած են... ո՞վ գիտէ՝ ի՞նչ եղած են անոնք:

Տարբերութիւն չկրցաւ իր պաղարկանութիւնը պահել: Իր հոգին լեցուած էր թաշկինակը աչքերուն տարաւ, գէմքը ձեռքերուն մէջ ծածկեց ու սկսաւ հեծկտալ:

Վազգէն չուարած՝ ծերունիին նայեցաւ:

Բարի ծերուկը չկրնարով համբերել, ոտքի ելաւ ու Վազգէնին ըսաւ.

— Մայրք է, Վազգէն:

— Մայրս... բացաքանչեց Վազգէն, ու իսկոյն ծունկի չոքելով իր առջին ինկած կնոջ ձեռքը բռնեց:

— Զաւա՛կս... մըմնջեց թշուառ կինը: Տարտախտ զաւա՛կս... ո՛հ, վերջապէս կը գտնեմ քեզ...:

Այդ պահուն դուռը զարնուեցաւ:

— Տեսնե՛նք... թերեւս վանականն է, ըսաւ ծերունին ու գնաց բանալու:

Արդարեւ, եկողը վանականն էր:

— Ո՛հ, սիրելի եղբայրս, մըմնջեց Վազգէն, երջանի՛կ եմ, որովհետեւ մօրս գրկին մէջ կը գտնուեմ:

— Վանական, որուն ուղղուած էին այդ խօսքերը, պահ մի խորին ուշադրութեամբ մը Վազգէնի ներկայացուցած կնոջ երեսը նայեցաւ ու ճանչցաւ...:

— Ի՞նչ... մըմնջեց ինքնիրեն. Վազգէն դաւաճան Առաքել էֆէնտիի զաւակն ըլլա՞յ... սոսկա՛լ ըսն է այս:

Ու, առանց զգալի ընկիւն իր հոգւոյն աղետաւոր երեւոյթը, մօտեցաւ այդ կնոջ ու սեղմեց անոր ձեռքը:

(Շարունակելի)

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՑԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Էվրոբա վերաբերելի իշխան Աւստրիա վե Բուսիա էլիզաբեթին (Մ. Գալիս վե Մ. Զինովիկ) թանգիմ օլընան իսլահատ ճեւմէ. լինին միւստեքեթաթը սիյասի թեւ պէտտիւլաթա տայիր օլմայուպ, եալընը իտարէի հիւքիւմէթ վե մալիէնէ թեշքիւլաթաան իպարէթ օլտըղը էլեկվա աշիքեարէ չըգըրը տըր:

Մաքէթոնիան իոչ վերայեթ-լերին վալիլերի իւզէրինէ նեզա-րէթ իտէն պիր ումուսի միւքէթ. թիշ թային օլընաճագ. վե պու միւքէթիւ իսլամ օլաճագ տըր. ֆազաթ պու միւքէթիւ քէնտի քէյֆի իւզըն մէմուրլարը ազլ ու թային իթմէյէ սէրպէսթ օլմա-յուպ, տէօվէթլերին իշխանէ միւ-րաճաթ իթմէյէ մէճպուր օլա-ճագ ըմըշ:

Քէնտիսի տախի Սթանպուլըն էնթրիգալարընա գարշը մուհաֆա-զա օլընապիւմէ իշխան, էվվէլտէն պիր մուայէն վազըթ իշխան թա-յին օլընաճագ տըր, եանի Սուլ-թան վե Պապը Ալի իսթէտիկի վազըթ անը ազլ իտէմէյէնէ տիր:

Մէգըրի ումուսի միւքէթիւ իշ-տէն մաատա՝ հէր պիր վերայեթ-տէ՝ պիրէր միւքէթիւ մուսվի-նի պուլընաճագ վե պու մուսվի-նի խրիսթիան օլուպ, վերայեթիւն էքսէրիյէթի օլան միլլէթտէն ա-լըլաճագլար:

Իսպարաթա կէօրէ, իշ պու իս-լահատ ճեւմէյի ճուսա կիւնիւ Սուլթանա թագտիմ օլընըլ օլա-ճագ:

— Վիէննան ինթըրնալիօն կազէթաընըն պէյանընա նազա-րէն, ըուս խարիճիէ նազըրը Գոնթ Լաւստորֆ Բէթրապուրկտաթի թիւրք էլիսի իլէ ուզուս միւզէ-քէրաթտան սօնրու, օրատաթի պուկար մասլահաթկիւզարը Մ. Սթանչէյէ թափիէ իթմիշ քի՝ Պուկարիա գօմիթէլերի լաղվ իթ-սին: Մ. Սթանչիվ թէլէկրաֆիլէ Գոնթ Լաւստորֆըն պու էմրինի Սօֆիայա պիւտիւմէսի իւզէրինէ, հիւքիւմէթ տէրհալ ֆէլս. Բրէնսէ պիւ միւզէքէրէ գօմիթէլերին իւ-ղասընա գարար վէրմիշ:

— Սթանպուլտան վիէննա կա-զէթալարընա իսպար օլընտըղընա կէօրէ, Սթանպուլտաթի մաքէ-թոնիալը պուկարար չու սրրա մէմէթէթլերինէ կիթմէթ թէլա-չընտա օլտըղարընտան տօլայը հիւքիւմէթ չիւքէլէնմէքտէ իմիշ:

— Մաքէթոնիա գօմիթէլերին էն պէ-մէչնուրը Մ. Պորիս Սարաֆօֆըն կէլէնէլտէն եէնիտէն Մաքէթոնիա-յա կէլմիշ օլտըղընը եազմըլը տըրգ. Պազըլար մէրգուլըն էվրոբայա կիթտիկինի սէօյէյօլարը ըտը. Ֆազաթ չիմտի Մ. Սարաֆօֆըն

Մաքէթոնիա տա պուլընտըղը թե-պէյիւն օլընըյօր. Պազըլար գուլ-վէթլի վե միւքէթմէլ սիւսլանմըլ պիր պէօյիւք չէթէ իլէ կէլտիկի-նի պիրտիրիօլար. վե պազըլա-րըն գալիւնէ՝ Մարաֆօֆ եալընըլ կէլմիշ իսէտէ՝ Մաքէթոնիա տա-խիլիտէն էվվէլտէն թէշքիւլ իթ-տիրմիշ օլտըղը չէթէլէրլէ պիր-լէշմիշ:

ՏԱԽԻԼԻՑԷ

Մաքէթոնիա գօմիթէլերին լաղ-վը վե պազը ըէյիսլերին թէվգըֆ օլմալարընտան տօլայը սօպրանիէ-տէ վարիտ օլան սիւվալլէրէ ճե-վապէն վիւքէլա ըէյիսի Մ. Տա-նէվ չու մաալտա իզահատ վէր-միշ տիր:

«Պուկարիան էն մուհիմ մե-նաֆիսինի կէօլ էօնիւնէ ալարագ հիւքիւմէթ չու թէտպիրի իթթի-խազ իթտի: Պուկարիա Մաքէ-թոնիա գարըլըլըլըլ իշխան պիր օճագ տէկիլ տիր. Շու ուֆագ պիր պէյիւք օլուպ, Մաքէթոնիա մէսէլէսինի հալի քէնտի մէգու-նիյէթի տախիլիտէ տէկիլ տիր:

«Սուլը իսլալ իտէպիլէնէ չու ահվալըն թէքիւնի տէօվէթլեր տէն թալէպ իտէպիլմէք իշխան Պուկարիա միւնասիպ պիր թարիգ թուլմալը տըր: Պիզիմ զայրէթիմիլ չու նօգթայա միւն-հասըր օլմալը, եանի Մաքէթոնիա մէսէլէսինի հալի տէօվէթլերին քէնտի էլլէրինէ ալմալարընա չա-լըլալըլըլ:

«Մաքէթոնիայը ալմագ իշխան հիշ նիյէթիմիլ էօք տըր, վե եա-լընըլ պիլ մէսուտ օլաճագըլ էկէր օրատա աասիշ իպգա օլընուպ, պիլիմ օրատաթի միլլէթտալարը-մըլըն հուգուգը թէմին օլընըր իսէ:

«Իսլահատ իճրասը իշխան տէօվ-լէթլերին չալըլտըղլարը չու սա-աթտա պիլ սիւքիւնէթի մուհա-ֆագա իթմէյէ վալիֆէտարըլ: Հիւսնի հարէքէթիմիլը Մաքէթո-նիալարա անլաթմալըլըլ քի՝ «օնլարըն հարէքէթլերին իշ-թիւրաք իտէրիլ տէյիւ տիւշիւմէ-լէրի խտթա տըր»: Պուլընլէ պէ-րապէր, պիլ պօրըմըլը սօն տա. զլ գայա գատար իյֆա իտէնէկիլ:

«Մաքէթոնիալար իւզէրինէ թէնտիրի օլանլար օնլարը գան-տըրմալը տըրլար քի՝ չիմտիքի չու հալտէ ըահաթ տուրաուսլար, վե պու ըահաթ տուրմալարը իլէ՝ հէմ տէօվէթլերէ վե հէմ թիւրքիայա գալէմի ալընմըլ օլան իսլահատ իճրա իթմէյէ մէյտան վէրմիշ օ-լաճագլար:

«Պուկար միլլէթիւն էն պէօ-յիւք մէնֆաթթը, տէտի Մ. Տա-նէվ, պիւլիւն նօգթալարտա սուլհ ու սիւքիւնէթ հիւք իթմէսինտէ տիր:»

Մէպուսլարըն Սօպրանէտէ չու մէսէլէտէն տօլայը իթիւրալաթը

վե միւհատէլէրի իքի կիւն տէ. վաւտան սօնրա՝ Մ. Տանէվին իզա-հաթը իւզէրինէ՝ էքսէրիյէթի ա-րա իլէ հիւքիւմէթէ էմիլիէթի քեամիլէ պէյան օլընտը:

Հիւքիւմէթին Մաքէթոնիա գօ-միթէլերին լաղվ իթմէսինէ գար-չը էն զիյատէ բրօթէսթ իտէն նարօտնեաք բարթիսի իտի վե տիկէր մուխալիֆ բարթիլէր պու պապտէ հիւքիւմէթէ գարշը կէլմէք իսթէմէտիլէր: Շու սիւ-քիւնէթ տօղրուսը մուհիպի թաա-ճուպ տըր: Մաքէթոնիա իշխան ումուսնէ վէլվէլէ գալտըրան Պուկ-ար միլլէթի պիրտէն պիրէ սին-սին. թուհաֆ...:

ՄԻԻԹԵՆԷՎԼԻՑԷ

Վիէննա կազէթալարըն եազ-տըղլարընա պիւնաէն, Սլա մե-պուսլար Մաքէթոնիալարա իանէ իշխան վիէննատա պիր ճէմիլէթ թէշքիւլ իթմէք թէտպիրինտէ ի-քէն բօլիս մանի օլմուշ տըր:

— Կէլէն հաֆթա Մանթաշեանըն Պաթուստաթի նէֆթ գուլուլա-րընտան պիր գըսմը թուլթուշմուշ օլուպ 800,000 ըուպիլ խասարաթ հէսապ օլընմըլ տըր: Ֆազաթ ֆապրիգա վե անպարար «Բօսիա» նամ չիրքէթտէ սիկուրթատա օլուպ, ֆապրիգանըն ինչասընա եէնիտէն պաշխմըլ տըր:

ՍՕՆ ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԷԼԷԿՐԱՖԻԱ

Վէննա, 23 փետր.

Էրմէնի մուհարրիւ Արփիար-իան կիճէ խանէսինէ կիտէր ի-քէն, մէճհալ քիմէնէլէր թարա. ֆընտան իւզէրինէ իւշ տէֆօ րէ ֆօլլէր լաթըլտը: Պու վուգուաթ սիւտի զարէքեարըլըլտան տօլայը օլմալը տըր:

Սրանպոլ, 23 փետր.

Տիւն Պապը Ալի վէրիլէն իս-լահաթ ճէտպիլիի միւզէքէրէյէ ալմագ իշխան պու կիւն մէճիսի վիւքէլա էրլտըլ սէրայընա թէ-ճէմիլ իթտի:

Սրանպոլ, 23 փետր.

Սթիւպտէն պիւտիրիլիկինէ պի-նաէն, փետր. 19 տա թիւրք աս. քէրի վե պիր պուկար չէթէսի պէյինտէ միւսատէմէ վուգու պու-լուպ, պուկարարտան 7 քիշի էլ միւշ. իւզէրլէրինտէ տիւնմիլթ պուլընմըլ տըր:

Սրանպոլ, 22 փետր:

Սէլտիլի վերայեթի տախիլիտէ փետր. 18 վե 19 տա չէթէլէր վե-ասքէրլէր պէյինտէ գալկար վուգու պուլտը. պիր պուկար էլտիւ վե 2 ասքէր եաթէլէնտի:

Պէլիւստ, 23 փետր.

Պորիս Սարաֆօֆըն 2—300 քի-շիլէք վե միւնթազամէն սիւհա.

լանմըլ եէտի չէթէլէր թէշքիւլ իթ-միշ օլտըղը պիւտիրիլիյօր:

Սրանպոլ, 22 փետր.

Պուկարիա թիւրքիտա պու-լընան աճէնթլերինէ էմիրնամէլէր եօլլայուպ, եէրլի պուկար մէթթէ-պէրանըն իթիլալա իշթիւրաք իթմէլէրի իշխան նասահաթ օ-լընմասըն թէնպիհ իթմիշ տիր:

ՄԻԼԼԻ ՊԱԼՕ

Ետըն ագչամ մէքթէպիմիլ մէնֆուաթընա օլարագ, պիր Պաօ վէրիլէնէք տըր: Որբախնամըն թէ-աթրօսընա թաղապանարըն մանի օլմասընտան տօլայը հէսալինէն էք-սէրիսի խըրս տուլմուշ օլուպ, պալօ պէլէթլերին ըէտտ իթմէք էքեարընտա պուլընտըղլարը մէս-մուսիլ օլմուշ տըր: Պու եօլտա հարէքէթի պիլ թապիպ իտէմէ-յիլ. զիրա իքի մաննաթ թաղա-կանարըն մէքիւր ուլկուսըլ վէ տուլկուսըլ հալի քէնտի շախալա-րընա վե թէրպիլէրինէ ալիտ տիր. մէքթէպ իսէ ումուս միլլէ-թին օլուպ, անըն մատտի վե մա-նէվի սուրէթտէ թէրագգըսը վե թէմիլի իշխան քեալէմիլին մուա-վէնէթի էլլէմ տիր:

ԹԻԱՊԱՐՏԸ

Թիւպարսի Ա. հատորը զրկած ենք մեր հետեւեալ գործակալներուն ուստի այդ խիստ հետաքրքրաշարժ ու շահեկան գիրքը ստանալ փափաքող-ները կրնան դիմել:

Պուրկազ	Տ. Արտաշէս Հարենցի
Ֆիլիպի	» Գ. Թիւթիւնճեանի
Շուլիս	» Ասլան Տօնիկեանի
Ռուշուք	» Սարգիս Մանուկեանի
»	» Է. Գափրիէլեանի
Սօֆիա	» Ասատուր Մկրտիչեանի
Տօլիս	» Նիկողոս Սիսակեանի
Սիլիստի	» Յ. Սարգիսեանի
Սիլիստի	Տէր Վաղինակ Հօր
Պուրիշ	» Յովհ. Փափագեանի
»	» Յովհ. Պիպէնճեանի
Բոնապուլ	» Սիսակ Միլիքեանի
Կալսց	Տէր Դեմիշ Հօր
»	» Գրիգոր Յակոբեանի
Գալիսի	» Կ. Էրզնկապեանի
Աղեքսանդ.	» Ս. Մարպանեանի
Պուրն	» Զ. Հայրենեանցի խմբ.
Ֆիլիպի	» Կ. Մարութեանի
Ռուս	» Յակոբ Ֆրանքեանի

176 Սաուլթ Պրիճ

Ա. Զ. Դ

Պալոյ Ազգ. Կեդր. վարժարանի ըն-թացաւարներէն երիտասարդ ուսու-ցիչ մը պատրաստ է ներկայ տարե-չընանի համար ընթացաւար ուսուցչի պէտք ունեցող պուկարար իւրա-տասանմանն Ազգ. վարժարաններու ձեջ պաշտօնավարել եւ կամ մայրնի լեզուի, ֆրանսիէնի, թուրքմու-թեան եւ ընական գիտութեանց մաս-նակի դասաւանդութիւններ ստանձնել համեստ պայմանով: Դիմել խմբագրու-թեանս:

Одговорникъ Н. Драгулевъ
Печ. на Хр. Н. Войничковъ—Варна